ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Հայեցողական պաշտոն ունեցող ծառայողի անունը, ազգանունը՝ Արմեն Գևորգյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝ նախարարի խորհրդական

3. Գործուղման վայրը և ժամկետները՝ ք.Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն), ապրիլի 17-ից 19-ը ներառյալ:

4. Հրավիրող կողմը՝ «CNews Conferences»՝ թվային ոլորտի տեղեկատվական հանրահայտ ընկերություն

5. Գործուղման նպատակը՝

Մասնակցել «**CNews Conferences**» ընկերության կողմից կազմակերպվող ***«Թվայնացումը հանրային հատվածում 2023»*** համաժողովին:

6. Քննարկված թեմաները՝

1. Պետական հատվածում թվային տեխնոլոգիաների զարգացման հեռանկարները,
2. Պլատֆորմային լուծումներ տարածաշրջանային / համայնքային կառավարման արդյունավետ փոխգործակցության համար,
3. Ինչպե՞ս կարգի բերել պետական մարմիններում առաջադրանքների կառավարումը,
4. Վկայագրված տվյալների կենտրոնի ռեսուրսներ ամպային տիրույթում. Կիրառական պրակտիկա,
5. «Սիմֆոնիա. Համահունչ գործընթացներ»,
6. OpenSours-ի տեղեկատվական անվտանգության ապահովման ուղեցույցների մասին
7. Պերմի երկրամասի կառավարության փորձը թվային վերափոխման համար հարթակային լուծումների օգտագործման հարցում
8. Մոսկվայի շինարարության դեպարտամենտի իրավասությունների կենտրոնը (центр компетенций) ՝ որպես շինարարության արդյունաբերության թվայնացման շարժիչ ուժը (драйвер):
9. Լենինգրադի մարզի տնտեսության, սոցիալական ոլորտի և պետական կառավարման ոլորտների թվային փոխակերպման բնագավառում ռազմավարության իրականացման մասին

7. Հանդիպումները, ելույթները՝

Ուշագրավ ելույթ ունեցավ ՌԴ Պետդումայի տեղեկատվական քաղաքանության, տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի Կոմիտեի նախագահի տեղակալ՝ Անդրեյ Սվինցովը: Նրա վերլուծական զեկույցը ներկայացրեց պետության արդի խնդիրները և ցանկալի լուծումների գաղափարներ:

Զեկուցողների և մասնակիցների հետ տեղի ունեցան հետաքրքիր կազմակերպչական և մասնագիտական զրույցներ, կարծիքների փոխանակումներ, սուրճի ընդմիջումների ընթացքում հասցեների փոխանակումներ՝ հնարավոր հետագա հաղորդակցում հաստատելու նպատակով:

8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Այդպիսիք առկա չեն:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այդպիսիք առկա չեն:

Գործուղվող՝

Նախարարի խորհրդական
Արմեն Գևորգյան

(Ստորագրություն)

02 մայիս, 2023թ.